

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ՀՀ Արմավիրի մարզի Ապագայի համայնքապետարանը հայտարարում է մրցույթ  
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ապագա համայնքի  
<< Վահագն Մարգարյանի անվան մշակույթի տուն >> համայնքային ոչ  
առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու  
համար**

ՀՀ Արմավիրի մարզի Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ապագա համայնքի << Վահագն Մարգարյանի անվան մշակույթի տուն >> համայնքային ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Կազմակերպություն) տնօրենի (այսուհետ՝ Տնօրեն) թափուր պաշտոն զբաղեցնելու համար **2021 թվականի նոյեմբերի 30-ին** Ապագայի համայնքապետարանի շենքում (Ապագա համայնք, 15-րդ փողոց N2 ) կանցկացվի մրցույթ ՀՀ Արմավիրի մարզի Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ապագա համայնքի << Վահագն Մարգարյանի անվան մշակույթի տուն >> համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնի համար:

Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար ներկայացվող պահանջները բավարարող, գրական հայերենին տիրապետող, գործունակ, 18 տարին լրացած ՀՀ քաղաքացիները, ովքեր ունեն՝

- 1) բարձրագույն կրթություն (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս),
- 2) հանրային ծառայության առնվազն հինգ տարվա ստաժ կամ հինգ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ համապատասխան բնագավառի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի N 224-Ն որոշման 9-րդ կետով սահմանված պահանջները.
- 3) իրենց պարտականությունների կատարման համար անհրաժեշտ իրավական ակտերի իմացություն ( Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն , «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենք , Հայաստանի Հանրապետության աշխատանքային

օրենսգիրք , «Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենք)։

- 4) տրամաբանելու և տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.
- 5) ֆինանսատնտեսական գործունեության իրականացման կարողություն.
- 6) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.
- 7) աշխատանքի կազմակերպման և ղեկավարման անհրաժեշտ հմտություններ.
- 8) ենթակաների հետ վարվելու անհրաժեշտ էթիկայի կանոնների իմացություն.
- 9) առնվազն մեկ օտար լեզվի իմացություն:

**Դիմող քաղաքացիները Ապագայի համայնքապետարանի աշխատակազմ պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝**

- 1) դիմում.
- 2) մեկ լուսանկար՝ 3x4 սմ չափսի.
- 3) քաղվածք աշխատանքային գրքույկից կամ տեղեկանք աշխատանքային գործունեության մասին.
- 4) ինքնակենսագրություն.
- 5) անձնագրի, բարձրագույն կրթության դիպլոմի (արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի) պատճենները.
- 6) տեղեկանք՝ մշտական բնակության վայրից.
- 7) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Քաղաքացին մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը ներկայացնում է անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր ժամը 9:00-18:00-ն, բացի շաբաթ և կիրակի օրերից: **Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 2021 թվականի նոյեմբերի 19-ը ժամը 18:00-ն:**

Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները տեղեկություններ և  
հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել Ապագայի  
համայնքապետարանի աշխատակազմ (ՀՀ Արմավիրի մարզ, Ապագա համայնք, 15-  
րդ փողոց N2 շենք , հեռ. 093 47 11 66 ):

**Ապագայի համայնքապետարանի աշխատակազմ**